# ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

(Վ. Տարատինովի յօդուածէց՝ Труды Имп. Кавказск. Общест. Сельск. хозяйства, 1890, № 3—5).

---

Այժմ արդէն կասկածից դուրս է, որ բամբակի հունձը 1889 թ. Երևանի Նահանգում փալլուն էր թէ քանակութեան և թէ յատկութեան կողմից։

Եւ իրաւ, դեռ 1884 թուականին Երևանեան նահանգը արտադրում էր ընդամենը որ և իցէ 170—180, իսկ յամենայն դէպս ոչ աւելի քան 200 հաղար պուդ բամբակ, մինչդեռ անցեալ 1889 թ. նոյն Երևանեան նահանգը տուել է աւելի քան 600 հաղար պուդ մաքուր և յատկութիւնով աւելի գերազանց բամբակ։ Եօթանասնական թուականների վերջերքում և ութանասնական թի սկզբում Երևանեան բամբակի գինը աւելի չէր քան 6—7 ռուբլի ամերիկականի և 4—5 ռուբլի տեղական սերմի բամբակի համար։ Այժմեայ՝ յատկութիւնով աւելի գերացանց բամբակը ընդհանրապէս 1½—2 ռուբլի աւելի թանկացել է։ Ներկայումս տեղական բամբակի պուդը Երևանում ծախւում է 6—7 ռուբլիով։ Իսկ է, դեռ այժմ էլ Երևանեան բամբակից պէտք է աւելի սպասել, քանի որ Երևանի շուկայում միշտ կարելի է տեսնել կամ խարնուրդը ամերիկականի տեղալինի հետ, կամ սպիտակը և մաքուրը՝ կեղտոտի և դեղինի հետ, ջուր և այլն. բայց ընդհանրապէս, կրկնում եմ, վերջին 2—3 տարիներում նաև այդ կողմից նկատելի յառաջդիմութիւն է եղած. օրինակ այժմ աւելի հեշտ է գտնել շուկայում և գնել մաքուր ապրանք՝ այսինքն տեսակները զտած և յամենայն դէպս ոչ արհեստական կերպով խառնած. մինչդեռ, նաև նոյն իսկ տեղացիների վկայութեամբ, 3—4 տարի առաջ մաքուր և անխառը բամբակ չէր կարելի գտնել և ոչ մի հակ, իսկ այժմ հաղարաւոր պուդերով կարելի է գնել մաքուր բամբակից։ Բայց և այնպէս չի կարելի խոշոր դնողների կողմից չը պահանջել աւելի ևս մեծ խստութիւն և արդարադատութիւն ապրանքի զտելու ժամանակ։

Երևանի բամբակի արտադրութեան այդքան արագ բարձրանալը և յատկութեան բարելաւումը, ի հարկէ, մի քանի պատճառներից յառաջացաւ. բայց գլխաւոր պատճառն էր թարմ ամերիկական սերմերի բերել տալը դլխաւորապէս Միացեալ Նահանդների հիւսիսային կողմերից, ուր հողային և այլ հանգամանքները Անդրկովկասի պայմաններին աւելի են համապատասխանում։

Եւ մի քանի տարիներում տեղական երևանեան բամբակ մշակողները կարողացան համոզել ամերիկական սերմի բամբակի գերազանցութեան մէջ, թէ հունձի քանակութեան և թէ գների կողմից՝ համեմատած տեղական հետ. Բացի դորանից, ամերիկական բամբակը թէ աւելի հեշտ է հաւաքւում դաշտերից և թէ աւելի հեշտ է մաքրւում ջիններով (բամբակ մաքրող մեքենայ) և ուրեմն թէ հաւաքելը և թէ մաքրելը աւելի աժան են նստում։

Իսկ այն ինչ ասում են ամերիկական սերմերի մասին, թէ իբր նորանից բամբակի ծառը չի հասնում, այլասեռւում է և հիւանդանում, այդ բոլորը դեռ ևս հաստատ չէ և ապացուցած չէ. իսկ այդ խօսքերի մէջ ինչ կայ ճշմարիտ՝ դա այնքան սարսափելի չէ, ինչպէս շատերին թւում է։ Ամերիկական սերմերից բամբակի ծառը ոչ թէ չի հասնում, այլ հասնում է մի երկու շաբաթ աւելի ուշ, քան տեղական դարաղօղը. և այդ էլ ճիշդ է միայն առաջին տարւայ համար, այսինքն բոլորովին նոր բերած սերմերի համար. հետեւեալ տարին նոյն սերմերը տալիս են հունձ դրեթէ նոյնաժամանակ, որպէս դարաղօղը, իսկ երրորդ տարին այդ տարբերութիւնը իսպառ վերանում է։

Երկրորդ առարկութիւնը այն է, թէ ամերիկական սերմերը Երևանեան նահանգում այլասեռւում են (փոփոխւում են)։ Բայց եթէ այդ ճիշդ է այժմ, այդ չի նշանակում, թէ նոքա միշտ պէտք է այլասեռւեն և կամ իբր նոքա չեն կարող չ'այլասեռւել։ Արդ, այդ մասին ես արդէն առիթեմ ունեցել ասելու, որ սա մի հանրածանօթ իրողութիւն է՝ որտեղ բամբակի մի քանի սորտերի սերմերը մշակւում են մէկը միւսի մօտ, այնտեղ զանազան տեսակի սերմերը անհրաժեշտ կերպով իրար հետ սեռականապէս խառնւում են և տիպական սերմերը դորանով փոփոխւում։ Եւ որովհետև մեզանում, Երևանեան նահանգում, չը կայ մի կտոր հող, և ոչ իսկ մի գեսեատին, ուր դանէր միմիայն մի տեսակ սերմեր և որի կողքին չը ցանէին բամբակի երկու-երեք ուրիշ տեսակի սերմեր, ուրեմն պարզ է, որ այստեղ սերմերը իրար հետ պէտք է խառնւեն և այլասեռւեն։

Ինչ վերաբերում է սերմերի փոփոխելու (այլասեռւելու) միւս պատճառներին, այդտեղ կարող է դեր խաղալ այն մեծ զանազանութիւնը, որ կայ տեղային և մշակման պայմանների մէջ՝ Անդրկովկասում և Ամերիկայում։ Բայց թէ այդ զանազանութիւնը ինչ կերպ է ազդում, դորան կարող է պատասխանել միայն ապագան։ Այժմ գոնէ ահագին մեծամասնութիւնը այն կարծիքն է յայտնում, որ թէ սերմերը և թէ նոցա արդիւնքը՝ բամբակը, Ամերիկայից տեղափոխելով Անդրկովկաս, իբր թէ անհրաժեշտ կերպով պէտք է տարբերութիւն վատանան և, վերջապէս թէ յատկութիւնով և թէ հունձի քանակութիւնով հաւասարւեն տեղային դարաղօղի հետ։

Մինչ 1886 թ. միայնդամայն նոյն կարծիքն էր յայտնւում նաև միջին—ասիական բամբակի մշակութեան մասին. ամենքը կարծում էին, որ

Միջին-Ասիան թէպէտ կարող է բամբակ արտադրել, բայց միայն ստորադոյն տեսակի. և իբր թէ լաւագոյն տեսակի բամբակը էր, է և այսուհետ էլ լինելու է միմիայն Ամերիկայում։ Ամերիկացիք իրանք, այդ կողմից, վախ կրելով օտար մրցումից, ամեն կերպ ջանում էին ամենքին համոզնել, թէ բամբակի ծառը միայն Ամերիկայումն է «իւր տանը», ինչպէս իրանք են ասում։ Բայց այժմ մենք արդէն գիտենք, որ, ուրիշ երկիրների մասին չը խօսած, Միջին-Ասիայի բամբակը, ամերիկական սերմից, ընդունում է Մոսկուայի և Լօձի գործարանատէրերից ոչ միայն ոչ-պակաս, այլ անգամ լատկութիւնով դերազանց, քան Ամերիկայի բամբակը, և տարէցտարի միջին-ասիական բամբակի հռչակը ամրանում է։

Ինչու պէտք է ուրեմն կասկածել մեր, հենց օրինակ, Երևանեան բամբակի լատկութիւնների մասին, քանի որ նոյն մոսկովեան գործարանատէրերը քանիցս լայանել են, որ այդ բամբակը աւելի բարձր է, քան ամերիկական fully good midding (այսինքն լաւ միջին տեսակը)։ Ուրեմն բոլոր խնդիրը միայն նորանումն է, որ մեր բամբակը բոլորն էլ նոյն բարձր տեսակից լինի, և ոչ միայն նորա առանձին պարտիաները։

Բացի դոբանից, ի դէպ պէտք է այստեղ և եթ աւելացնել, որ լաւագոյն մոսկովեան գործարանատէրերը ընդունում են, որ մեր երևանեան ամերիկական սերմի բամբակը երկու առաւելութիւններ ունի ամերիկայից եկածի առջև. նախ, որ նա աւելի հեշտ է մաքրւում կեղտից, փոշիից և առհասարակ բոլոր կողմնակի խառնուրդներից, իսկ երկրորդ, որ նա անհամեմատ աւելի առաձգական է (քաշւող, ձգւող), քան Ամերիկայինը,—լատկութիւններ, որոնք շատ թանկ են գործարանատէրերի համար։

Վերջապէս, թողնելով մի կողմ մշակութեան բոլոր կարելի բարելաւումները, կ'ասենք միայն, որ նոյն իսկ այժմեայ հանգամանքներում, մենք ստանում ենք մի դեսեատինից՝ 20 պուդ և աւելի բամբակ, այսինքն 100 և աւելի բուբլի զուտ արդիւնք։

Իսկ ինչ վերաբերում է, վերջապէս, այն բանին, որ իբր թէ ամերիկական բամբակի ծառը մեղանում հիւանդանում է, իսկ տեղականը՝ ոչ,—այդ արդէն ուղիղ չէ։ Իսկ է, որ ամերիկական բամբակի ծառը, որպէս աւելի քնքոյշը, մի փոքր աւելի է հիւանդանում և այն էլ ոչ միշտ (ես ականատես եմ եղել, որ երկուսն էլ՝ գրեթէ հաւասարապէս հիւանդանում են), բայց բանը նորանումն է, որ հիւանդութեան, այն է՝ ժանգով ծածկւելու ներդործութիւնը այլ է ամերիկականի և այլ է տեղականի վերայ՝ ամերիկական բամբակի ծառի տերևները այդ հիւանդութիւնով ծածկւում են կարմիր կամ կարմրագոյն ծածկով (ուստից և անունը՝ красная или бурая ржавчина), մինչդեռ տեղային բամբակի ծառի տերևները երբէք չեն կարմրում, այլ ընդհակառակը, անգոյն են դառնում կամ մոլդ են դառնում, մի խօսքով տեղի է ունենում այն, ինչ անուանւում է տերևների խլրօրդ։

Այդ պատճառով շատերը կարծում էին և կարծում են ցայժմ էլ, թէ ժանգից միայն ամերիկականն է հիւանդանում, իսկ տեղայինը՝ ոչ, կրկնում եմ, մեզ թւում է թէ այստեղ թիւրիմացութիւն կայ։ Ես ասում եմ, թէ հիւանդութեան էֆեկտները զանազան են, բայց հետևանքները նոյնն են՝ թէ մէկի և թէ միւսի տերևները և կողմները վայր են ընկնում, բունը մերկանում է, սևանում և չորանում։

Ահա բոլորը, ինչ կարելի է ասել ամերիկական սերմի և դարաշող բամբակի զանազանութիւնների մասին։ Եւ ակնյայտ է, որ ամերիկականի արժանաւորութիւնները տեղայինի առջև շատ աւելի են, քան նորա պակասութիւնները, որոնք, մեծամասնաբար կամ չը կան և կամ չափազանցնւում են։

Այդ պատճառով շատ հասկանալի է, որ ներկայումս Երևանեան նահանգում ամերիկական սերմը 5—6 անգամ աւելի է ցանւում, քան տեղայինը։ Եւ այդ աճումը այնքան արագ է ընթանում, որ մօտ ապագայում երևի տեղական բամբակի ծառը բոլորովին տեղ կը տայ ամերիկականին, որին տեղային բամբակամշակութիւնը ամեն կողմից շահած կը լինի։

---

Որպէս յայտնի է, Երևանեան բամբակի այդպէս մեծացրած արդիւնաբերութիւնը և յատկութեան բարելաւելը դրդեց Երևանում երևալ այնպիսի հաստատ և խոշոր տների, որպէս Ե ա՛ լ օ ս լ ա վ ի Մ ե ծ Մ ա ն ո ւ ֆ ա կ տ ո ւ ր ի Ը ն կ ե ր ո ւ թ ի ւ ն ն է (Товарищество Ярославской Большой Мануфактуры), յետոյ Վ լ ա դ ի մ ի ր Ա լ ե ք ս է ե ի չ ի տունը Մոսկվայում, այս Պ օ ղ ն ա ն ս կ ի'ի տունը Լօձի'ում. և այժմ Երևանում բամբակ առնելու համար ամեն տարի գալիս են նոր ֆիրմաներ, օրինակ 1889 թ.-ին Լօձի'ից եկան նաև Կ ր ո ւ շ և Լ ե ն դ է ր։

Այդ ամենքի Երևան գալովը, բամբակի պահանջը աւելի ևս մեծացաւ, գները մի փոքր բարձրացան, և բամբակի մշակութիւնն էլ այդ պատճառով աւելացաւ։ Բայց բացի այն, որ արդիւնաբերութիւնը աւելացաւ և գները բարձրացան, նոյն այն վերը յիշած խոշոր գործարանական տներին Երևանեան բամբակամշակութիւնը պարտական է նաև բամբակի որպիսութեան համար. առաջին՝ ապրանքի խիստ դասաւորելու (сортировка) և գնահատելու (разцѣнка) պատճառով. երկրորդ, բաղմաթիւ ջինների պատճառով, որ այդ ֆիրմաները սփռեցին Երևանեան նահանգի բոլոր հինգ գաւառների յարթութիւնների վերայ, դորանով նոքա ժամանացրին բամբակ մաքրելը, ուրեմն աւելացրին նորա զուտ արդիւնքը, և երրորդ, նոյն այդ ջիններով մաքրելով բամբակի որպիսութիւնը բարելաւացաւ։

---

Ապպիսով բամբակի մշակութիւնը Երևանի նահանգում արդէն այնքան հաստատուեց և դառաւ արդիւնաւէտ և այնքան ուժեղ չարունակում է զարգանալ, որ այս վերջին երկու տարիների «բամբակի տենդը» տարածուեց նաև այդ նահանգից դուրս, Գանձակի և Բաքուի նահանգների վերայ, գլխաւորապէս Թիֆլիս—Բաքուի երկաթուղու գծի ընթացքով, սկսած Լեռքի'ից մինչ Բաքու։ Դեռ 1887 թ.-ին, այստեղ, ահագին տարածութեան վերայ արտադրւում էր միայն մի քանի հարիւր պուդ բամբակ՝ բացառապէս անալին գործածութեան համար. և այն էլ չը դիտէին ինչով մաքրել։ Իսկ անցեալ 1889 թ.-ին այստեղ արտադրուեց բամբակ մօտ 30.000 պուդ. և այդտեղ էլ երևացին տները Պեղնանսկու՝ Լօձի'ից, Եարոսլաւի Մեծ-Մանուֆակտուրալի ընկերութիւնը Մոսկաւից. այդպիսով չը նայած որ տեղական գները, մինչ այնմ 5—6 ր., բարձրացան մինչ 8 ր., բոլոր արտադրածը ձեռաց առնուեց։

Այդ ֆիրմաները նաև այստեղ, որպէս և Երևանում, ամենից առաջ բաժանեցին տեղական ազգաբնակութեան մէջ ամերիկական բամբակի ծառի սերմերը՝ ցանելու համար. չետոյ ամենակարևոր կէտերում, որպէս Աղդաշ, Գոկչայ, Քիւրդամիր, Լեակի և այլ տեղերում, նոքա իրանց ջիները և պրեսները (մաքրելու մեքենանները) կանգնացրին։ Եւ գործը գնաց շատ աշխոյժ կերպով։ Ներկայ 1890 թ.-ական համար այստեղ աւելի ևս մեծ պատրաստութիւններ են տեսնւում. Եարոսլաւի Մեծ-Մանուֆակտուրի Ընկերութեան տունը ապսպրել է 300 պուդ սերմ միջին-ասիական բամբակի ծառից, Պօլնանոկու տունը ուղարկել է այստեղ 1000 պուդ բամբակի սերմ Երևանից։ Տեղացի բնակիչներից մի քանիսը հետեցին նոցա օրինակին և արդէն համոզած են, որ բամբակի արդիւնքը գերազանց է բոլոր միւս գիւղատնտեսական արդիւնաբերութիւններից։ Յետ այնու, տեղագրական և կլիմայական պայմանները, ազատ և ջրովի հողերի առատութիւնը, հաղորդակցութեան լարմարութիւնները, քանի որ նոքա բոլորը երկաթուղու գծի մօտն են, դուշակել են տալիս, որ որ և իցէ 5—6 տարում, նաև այստեղ արտադրելու է գուցէ ոչ պակաս բամբակ, քան ինչ այժմ կայ Երևանեան նահանգում։

---

Սակայն դեռ մի քանի խօսք ասենք այդ «բամբակային տենդի» և նորա արագ զարգացման և տարածելու մասին։

Ինչ վերաբերում է Գանձակի և Բաքուի նահանգներին, գործի նորութեան պատճառով դեռ ևս դրական մի բան ասել դժւար է։ Իսկ Երևանի նահանգի նկատմամբ կասկած անգամ չի կարող լինել, որ այդտեղ բամբակի մշակութիւնը ամենաարդիւնաւէտը և ամենատարածւածն է (?) գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերից։ Բամբակի հունձը այդտեղ, գոնէ վերջին տարիներում, տատանւում է 15—25 պուդի մաքուր բամբակի մէջ

մէկ դեսեատինից [1]), ուրեմն միջին հաշուով բամբակի հունձը մի դեսեատինից՝ 20 պուդ է։ Թէ իսկապէս այդ այդպէս է, այդ երևում է նորանից, որ Երևանի նահանգում բամբակամշակ հողերը բռնում են ոչ աւելի քան 30.000 դեսեատին, մինչդեռ հունձը 60.000-ից պակաս չէ։ Եւ կամ օրինակ, Շարուրի գաւառում, որը ամենամեծն է բամբակի արտադրութիւնով,—բամբակամշակ հողերը 10.000 դեսեատինից աւել չեն, մինչդեռ 1889 թ. հունձը այդտեղ անկասկած պակաս չէր քան 200.000 պուդ։

Եւ այսպէս, դիսեատինից ստացւում է 20 պուդ, որը, 8 բուբլիով, կ'անէ 160 բուբլի դեսեատինից։ Աւելացրէք դորան նաև ստացւող սերմը՝ 50 պուդ 30-ական կոպէկով, ուրեմն աւելի քան 15 բուբլի, այն ժամանակ դիսեատինի արդիւնքը կը լինի 175 բ., որից 75 բ. ծախքը դուրս գալով, կը մնայ 100 բուբլի զուտ արդիւնք։

Երևանեան նահանգը, իւր 600.000 պուդ բամբակից ստանում է ուրեմն 4.200.000 բուբլի, եթէ պուդը միջին թւով 7 բուբլի հաշուելու լինենք։

Ահա թէ ինչումն է կայանում մեզանում մեր վերը լիշած «բամբակի տենդը»։

Եւ բանը այդ դրութեան մէջ չի մնալու. բամբակի մշակութիւնը աւելի ևս պէտք է տարածւի, մինչև որ նա կը բռնի Անդրկովկասի յարթութիւնների դատարկ մնացած ահագին տարածութիւնները։

---

Բայց ես իսկապէս դորանով չ'ասացի թէ Երևանի նահանգի բամբակամշակութիւնը իւր ծայրահեղ սահմաններին է հասել։ Ընդհակառակը, դեռ շատ բան մնում է անել նոյն իսկ մշակութիւնը լաւացնելու նկատմամբ։

Ամերիկայում, ճիշդ է, բամբակի դաշտերը բռնում են մօտ 6 միլիոն դեսեատին և ստացւում՝ 90—100 հազար պուդ, ուրեմն միջին հաշուով հունձը, դեսեատինի վերայ, աւելի չէ, այլ պակաս էլ է քան մեզանում։ Բայց չը պէտք է մոռանալ, որ Ամերիկայում ցանքը կատարւում է կարգով և ոչ թէ սերմը շաղ տալով, որպէս մեզանում և մէկ ծառը միւս ծառից հեռու է գոնէ 3—4 ֆուտ, մի քանի նահանգներում մինչև անգամ 7 ֆուտ և աւելի [1])։ Ուրեմն ցանքը Ամերիկայում շատ աւելի նօսր է, քան մեզանում։ Բայց և այս հաստատ է, որ Հիւսիսային Ամերիկայի բոլոր բամբակամշակ նահանգներում—լաւ հողերում և լաւ մշակութեան պայմաններում ստացւում է հունձ սովորականից երկու և մինչև իսկ երեք անգամ աւելի։ Ուրեմն նաև մեզանում, Անդրկովկասում, ուր ցանքը աւելի խիտ

---

[1]) Դեսեատինը հաւասար է 60 սաժէն երկարութիւն և 40 սաժէն լայնութիւն ունեցող հողի տարածութեան։

[1]) Ոտքը ֆուտը հաւասար է մէ սաժէնի կամ երեք արշին։

է կատարում և ձեռքով են բանում (Ամերիկայում՝ ձիերով են մշակում), հունձը կարող է լինել ոչ թէ 20 կամ 25 պուդ. այլ 40—50 պուդ։ Բայց այդ բանին հասնելու համար մեզ մօտ դեռ շատ լան է պակաս։

---

Գութալիսի նահանգում նմանապէս կայ բամբակի մշակութիւն. բայց այդ գործը այդտեղ անյաջող եղաւ և այժմ գրեթէ վերանալու վերայ է։ Դորա գլխաւոր պատճառը այն է, որ այդ նահանգում եթէ ոչ բացառապէս, գոնէ գլխաւորապէս մշակում են բամբակի ծառի այն տեսակը, որ յայտնի է անունով Sea Island (Զէա Իսլանդ, ալինքն կղզիական կամ ծովափեայ բամբակի տեսակը), կամ այսպէս կոչուած Եգիպտականը՝ որի սերմերը մանր են, առանց մազի և սեւագոյն։ Ամենայաջող պայմաններում Sea Island սերմից հաւաքում են 12 պուդ մի դեսեատինից, մինչդեռ եթէ մշակեն սովորական ամերիկական բամբակը (Ipland կոչուած), կը սառնալին ոչ պակաս քան 24 պուդ դեսեատինից։ Բայի դորանից Գութալիսի նահանգում սաստիկ սկսեցին մշակել եգիպտացորենը (կուկուրուզ), որից սակայն այժմ, երբ գները սաստիկ ընկած են, այլ ևս առաջուայ օգուտը չ'ունին։

Բամբակի մշակութիւնը Գութալիսի նահանգում այս յաջող պայմանն ունի, որ այդտեղ անսառուց եղանակները տևում են 9 և մինչև անգամ 10 ամիս, մինչդեռ Երևանի նահանգում 7 ամսից աւելի չեն տևում։ Ահա ինչու Երևանում դանգատւում են, որ յաճախ բամբակի ծառը ժամանակին չի հասունանում և հունձը թերի է լինում։

Խոնաւութիւնը և անձրևային եղանակները (որ յատուկ են Գութալիսի նահանգին) ամենևին չեն կարող խանգարել բամբակի յաջող մշակութեան։

Ամերիկայում կայ մի ամբողջ գոտի, ուր նոյնքան յաճախ և լորդ անձրևներ են գալիս և ուր բրինձը մշակւում է առանց ջրելու և ուր բրնձի կողքին բամբակ են մշակում։

---